

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

8-96.02.01 «ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ և ՉԱՐԴԱՅԻՆ ԴԻՄԱՅԱՐԴԱՐՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 8-96.02.01.01-3 «ՄԱՍՆԱՅԱՐԴԱՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐԸ

Անվանումը	Նկարագիրը
2	3
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը և կոդը	Մասնագիտությունը՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» Որակավորումը՝ «Մատնահարդար» Մասնագիտության կոդը՝ 8-96.02.01 Որակավորման կոդը՝ 8-96.02.01.01-3:
I. Դերը	Մատնահարդարը կարող է աշխատել գեղեցկության սրահներում, կոսմետոլոգիական ու էսթետիկական կենտրոններում, մարզասրահներում, հյուրանոցային համալիրներում և այլ կազմակերպություններում, որտեղ պահանջվում է մատնահարդարման ծառայությունների մատուցում՝ առանձին անձանց համար, պահպանելով ազգաբնակչության տարբեր սեռատարիքային խմբերի եղունգների և մաշկի պատշաճ գեղագիտական արտաքին տեսքը և առողջությունը:
II. Խնդիրների բնագավառները և աշխատանքային գործընթացները	
Խնդիրների բնագավառ 1.	Նախապատրաստական աշխատանքների կատարում և հաճախորդի սպասարկում
Աշխատանքային գործընթացները	1. Աշխատանքային գործիքների, սարքավորումների, հարմարանքների, նյութերի ճիշտ ընտրություն, 2. Սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում, 3. Աշխատանքի անվտանգության կանոնների պահպանում, 4. Հաճախորդի ընդունում և սպասարկում:
Կատարման չափանիշներ	1. Կարողանում է ընտրել և տարբերել անհրաժեշտ աշխատանքային գործիքները, սարքավորումները հարմարանքներն ու նյութերը, 2. Խստորեն պահպանում է սանիտարահիգիենիկ նորմերը և աշխատանքի անվտանգության կանոնները, 3. Կարողանում է հմտորեն հաղորդակցվել և բանակցել

	հաճախորդի հետ:
Խնդիրների բնագավառ 2.	Հաճախորդի ձեռքերի կամ ոտքերի եղունգների, մաշկի արտաքին զննում և վիճակի գնահատում
Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) Հաճախորդի ձեռքերի եղունգների և մաշկի արտաքին զննում, 2) Հաճախորդի ոտքերի եղունգների և մաշկի արտաքին զննում, 3) Հաճախորդի եղունգների և մաշկի ընդհանուր վիճակի գնահատում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանում է արտաքին զննության ժամանակ տարբերակել հաճախորդի ձեռքերի և ոտքերի եղունգների և մաշկի հիվանդությունները ժամանակավոր տեղային խանգարումներից և վնասվածքներից, 2. Չննության արդյունքում կարողանում է գնահատել մաշկի և եղունգների իրական վիճակը և կայացնել համապատասխան որոշում հետագա գործողությունների համար:
Խնդիրների բնագավառ 3.	Հաճախորդի հետ հստակեցում և համաձայնեցում մատուցվող ծառայությունների համալիրի շուրջ
Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) Արտաքին զննությունից հետո հաճախորդի հետ բանակցությունների վարում, 2) Մատուցվող ծառայությունների շուրջ պայմանավորվածության ձեռք բերում, 3) Մատուցվող ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերի, գործիքների և այլ միջոցների շուրջ հաճախորդի հետ փոխհամաձայնեցում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Կարողանում է հմտորեն բանակցել հաճախորդի հետ և հստակեցնել հետագա ծառայությունների մատուցումը, 2. Կարողանում է հաճախորդի հետ արդյունավետ փոխհամաձայնեցման գալ մատուցվող ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերի, գործիքների և այլ միջոցների շուրջ:
Խնդիրների բնագավառ 4.	Ձեռքի մատնահարդարման աշխատանքների իրականացում

Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) Ձեռքի եղունգների հիգիենիկ մաքրում և մշակում, 2) Ձեռքի մաշկի մշակում , 3) Ձեռքի եղունգների մեխանիկական մշակում, 4) Եղունգների լաքապատում, 5) Եղունգների արհեստական երկարացում, 6) Եղունգների գեղարվեստական ձևավորում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Ճիշտ է կիրառում եղունգների հիգիենիկ մաքրման և մշակման համար անհրաժեշտ նյութերը, 2. Տիրապետում է ձեռքի մաշկի մշակման տարբեր եղանակներին և միջոցներին, 3. Կարողանում է կիրառել եղունգների մեխանիկական մշակման միջոցները և սարքավորումները, 4. Կարողանում է կիրառել եղունգների պրոֆեսիոնալ միջոցներով լաքապատման տեխնիկան, 5. Կարողանում է կիրառել եղունգների արհեստական երկարացման և գեղարվեստական ձևավորման ժամանակակից եղանակները:
Խնդիրների բնագավառ 5.	Ուռքի մատնահարդարման աշխատանքների իրականացում
Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1) Ուռքի եղունգների հիգիենիկ մաքրում և մշակում, 2) Ուռքի մաշկի մշակում , 3) Ուռքի եղունգների մեխանիկական մշակում, 4) Եղունգների լաքապատում, 5) Եղունգների արհեստական երկարացում, 6) Եղունգների գեղարվեստական ձևավորում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Ճիշտ է կիրառում եղունգների հիգիենիկ մաքրման և մշակման համար անհրաժեշտ նյութերը, 2. Տիրապետում է ուռքի մաշկի մշակման տարբեր եղանակներին և միջոցներին, 3. Կարողանում է կիրառել եղունգների մեխանիկական մշակման միջոցները և սարքավորումները, 4. Կարողանում է կիրառել եղունգների պրոֆեսիոնալ միջոցներով լաքապատման տեխնիկան, 5. Կարողանում է կիրառել եղունգների արհեստական երկարացման և գեղարվեստական ձևավորման ժամանակակից եղանակները:
Խնդիրների բնագավառ 6.	Խորհրդատվության տրամադրում

Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> 1. Հաճախորդին մասնագիտական խորհրդատվություն տրամադրում՝ եղունգների և մաշկի հետագա խնամքի հետ կապված, 2. Բացահայտված ակնառու հիվանդությունների դեպքում՝ հաճախորդին համապատասխան մասնագետի մոտ ուղղորդում:
Կատարման չափանիշներ	Կարողանում է տրամադրել նպատակային մասնագիտական խորհրդատվություն
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Մատնահարդարը պատասխանատու է իր կողմից կատարված միջամտությունների որակի, օգտագործվող նյութերի և սարքավորումների ընտրության հարցում, հաճախորդին խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները արդյունավետ օգտագործելու, աշխատանքը հաճախորդի պահանջներին և ակնկալվող արդյունքին համապատասխան կատարելու համար:</p> <p>Մատնահարդարը իր աշխատանքային պարտականությունների շրջանակներում սխալ գործողության հետևանքով հաճախորդի առողջության խաթարման դեպքում պատասխանատվություն է կրում օրենքով հաստատված կարգով:</p>
IV. Լեզուները	Մայրենի լեզվի ազատ իմացություն, օտար լեզվի բավարար իմացություն՝ շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word • MS Excel • Internet Explorer

<p>VI. Գիտելիքները</p>	<p>Պետք է իմանալ.</p> <ol style="list-style-type: none"> 1) Մասնագիտական գործունեության մեջ կիրառվող եզրույթները (տերմինոլոգիա) 2) Հաճախորդի հետ շփվելու հոգեբանության և էթիկայի հիմունքները 3) Մաշկային և եղունգների հիվանդությունները և դրանց կանխարգելումը 4) Ձեռքի և ոտքի մաշկի, եղունգների խնամքի բոլոր միջոցները և ձևերը 5) Ձեռքի և ոտքի մերսման ձևերը և միջոցները 6) Եղունգների արհեստական երկարացման տեսակները և ձևերը 7) Մասնագիտական համապատասխան գործիքների, սարքավորումների և հարմարանքների արդյունավետ օգտագործման ձևերը 8) Մասնագիտական համապատասխան գործիքների և սարքավորումների աղտահանման ձևերը և միջոցները 9) Աշխատանքի սանիտարահիգիենիկ նորմերը 10) Աշխատանքի անվտանգության կանոնները 11) Առաջին բժշկական օգնության կանոնները
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) Շփվել և բանակցել հաճախորդի հետ 2) Նախապատրաստել աշխատատեղը՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը և աշխատանքի անվտանգության կանոնները 3) Նպատակային օգտագործել մատնահարդարման համար կիրառվող մասնագիտական գործիքները, սարքավորումները և միջոցները 4) Պահպանել մասնագիտական գործիքների, սարքավորումների և միջոցների աղտահանման գործընթացները 5) Գնահատել արտաքին զննության ժամանակ ձեռքի և ոտքերի մաշկի և եղունգների ընդհանուր վիճակը 6) Ընտրել և կիրառել խնամքի համապատասխան միջոցները՝ կախված մաշկի և եղունգների որակից 7) Կիրառել մատնահարդարման մեխանիկական մշակման ժամանակակից տեխնոլոգիաները

	<p>8) Կիրառել եղունգների լաքապատման ժամանակակից տեխնոլոգիաները</p> <p>9) Կիրառել եղունգների արհեստական երկարացման ժամանակակից տեխնոլոգիաները</p> <p>10) Ցուցաբերել առաջին բժշկական օգնություն</p> <p>11) Տրամադրել մասնագիտական խորհրդատվություն</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պետք է ունենա.</p> <ol style="list-style-type: none"> 1) սեփական մտահղացումներն առաջարկելու կարողություն, 2) աշխատանքային առաջադրանքները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, 3) հանձնարարականները ճշգրտելու կարողություն, 4) անհատական և խմբային աշխատանքները կատարելու կարողություն, 5) մարդկանց հետ շփվելու կարողություն, 6) բնության պահպանման և շրջակա միջավայրը չաղտոտելու հակում: